**Հաշվետվություն**
**2025 թվականի ապրիլի 28-ից 30-ը Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև) կատարած գործուղման արդյունքների մասին**

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը**
   Նանե Ղազարյան, Կադաստրի կոմիտեի ղեկավարի տեղակալ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ժնև, ապրիլի 28-ից 30-ը:

3. **Հրավիրող կողմը.**
   ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի քաղաքաշինության, բնակարանաշինության և հողի կառավարման հարցերով կոմիտե:

4. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն ՄԱԿ-ի եվրոպական տնտեսական հանձնաժողովի (ԵՏՀ) հողերի կառավարման հարցերով աշխատանքային խմբի (WPLA) 14-րդ նստաշրջանին:

5. **Քննարկված թեմաները.**

   Քննարկումները հիմնականում ծավալվել են գլոբալ մեգաթրենդների (թվային փոխակերպում, ուրբանիզացիա, կլիմայի փոփոխությունը և փոխկապակցված բիզնես էկոհամակարգերի զարգացում) համատեքստում անշարժ գույքի տիրապետման անվտանգությանն առնչվող խնդիրների շուրջ: Անդրադարձ է կատարվել հողերի կառավարման ոլորտի վրա նշված միտումների ազդեցությանը, ստեղծվող հնարավորություններին և հնարավոր ռիսկերին: Մասնավորապես շոշափվել են տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների առաջընթացի, կիբերանվտանգության, բաց տվյալների և արհեստական ինտելեկտի, նորարարական լուծումներ կիրառելու հնարավորությունների, համակարգերի ճկունության ապահովման և տվյալների պաշտպանության ոլորտում առկա մարտահրավերները: Անդրադարձ է կատարվել նաև հողերի կառավարման ոլորտի վրա ազդող այնպիսի կարևոր գործոնների, ինչպիսիք են բնակլիմայական աղետների հաճախականությունը և ոչ ֆորմալ կառույցների առկայությունը:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**
   Նիստի ընթացքում քննարկվել են փորձագետների կոմիտեի ընդհանուր ծրագրի և տարածաշրջանային կոմիտեի պաշտոնական գործունեությանը վերաբերող հարցեր: Միջոցառմանը ներկա ազգային քարտեզագրական, կադաստրային և հողի գրանցման մարմինների ներկայացուցիչների հետ ունեցած քննարկումների ընթացքում ներկայացրել եմ հողերի կառավարման՝

Կադաստրի կոմիտեի իրավասությանն առնչվող ոլորտներում առկա իրավիճակը, օրենսդրական կարգավորումները, առկա մարտահրավերներն ու ձեռնարկվող միջոցառումները: Անդրադարձել եմ Կադաստրի կոմիտեի կողմից մատուցվող ծառայությունների թվայնացմանը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման առանձնահատկություններին, ազգային տարածական տվյալների ենթակառուցվածքի ձևավորմանն ու զարգացմանը, հողերի կառավարման գործընթացում վերջինիս ունեցած կարևոր դերակատարությանը:

Ներկայացրել եմ «Կադաստրային քարտեզներում առկա սխալների ուղղման կարգը Հայաստանում. երկրատարածական նորարարության և իրավական կարգավորումների կամրջում» թեմայով շնորհանդես:

7. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

ԵՏՀ անդամ պետությունների ներկայացուցիչների հետ համատեղ մասնակցել եմ աշխատանքային խմբի ղեկավարի, ղեկավարի երկու տեղակալների, ինչպես նաև բյուրոյի նոր անդամների ընտրությանը: Վերստուգվել է 2023 թվականի տասներեքերորդ նիստից հետո Հողերի կառավարման հարցերով աշխատանքային խմբի (WPLA) աշխատանքային ծրագրի իրականացման ընթացքը, սահմանվել է 2026-2027 թթ. համար նախատեսված աշխատանքային ծրագիրը:

8. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Քննարկումների ընթացքում ընդգծվեց գույքի տիրապետման անվտանգության (tenure security) առանցքային նշանակությունը աղետներից հետո վերականգնման կարողությունների ամրապնդման, տնտեսական կայունության և սոցիալական բարեկեցության սպահովման տեսանկյունից: Որպես գույքի տիրապետման անվտանգությանն առնչվող խնդիրներին արձագանքելու հիմնական առաջնահերթություններ առանձնացվեցին հողային ռեգիստրների դերի ամրապնդումը, տարածական տվյալների համակարգերի ինտեգրումը, ընդգրկուն իրավական կարգավորումների մշակումը, ինչպես նաև միջազգային համագործակցության, փորձի փոխանակման և նորարարական լուծումների ներդրման անհրաժեշտությունը:

Միջոցառումը հանդիսացավ արդյունավետ հարթակ շահագրգիռ կողմերի միջև գաղափարների և ռազմավարությունների փոխանակման համար՝ արժեքավոր տեղեկատվություն տրամադրելով գույքային իրավունքների պաշտպանության ապահովման մակարդակի բարձրացման, ինչպես նաև այս ոլորտում մատուցվող ծառայությունների թվայնացմանն ուղղված գործընթացների վերաբերյալ:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը:**

Նանե Ղազարյան

06.05.2025 թ.